քնով ծանրացած մայրը, կէս-գիշերին, մեքենաբար շարժում է անհանգիստ երեխայի օրօրոցը: Ասլանը առեց թիակը նրանից եւ հմուտ ձեռքով սկսեց ինքը թիավարել: Նաւաստին ոչինչ չզգաց:

Ալիքները այն աստիճան բարձրացան, որ ջուրը այժմ սկսել էր ցայտել նաւակի մէջ: Նաւաստին զարթնեց: Նա յօրանջելով գլուխը վեր բարձրացրեց, ձեռքով շփեց ճակատը, կարծես աշխատում էր բռնի կերպով քունը փարատել իր աչքերից: Նա զարմացած նայեց իր շուրջը: Նեբրովթ եւ Գրգուռ լեռների գագաթների վրայ երեւում էին մոխրագոյն ամպեր: Մշուշը պատել էր այն կողմը, որը, հետզհետէ մռայլուելով, թանձր մառախուղի կերպարանք էր ստանում: Այդ տեսնելով, նաւաստիի հաստ, շագանակի գոյնով շրթունքները հեգնաբար ետ քաշուեցան եւ երեւան հանեցին նրա խոշոր, սպիտակ ատամները:

— Օ-հո՛ , — բացականչեց նա, — շուտով մի լաւ փոթորիկ կունենանք...

Մառախուղը հարաւային կողմից սկսեց աւելի եւ աւելի տարածուել եւ բռնեց հորիզոնի մեծ մասը: Բայց աղօթարանի կողմից նոր ծագող արեգակը ծիծաղում էր: Երբեմն կաթկաթում էին անձրեւի խոշոր կաթիլներ, թէեւ մեր վրայի երկինքը դեռ պարզ էր: Ջերմ եւ հեղձուցիչ գիշերից յետոյ այդ երեւոյթը այդ կողմերում անսովոր բան չէր:

Ասլանը դեռ ուժեղ կերպով թիավարում էր: Նաւաստին կանգնած նայում էր նրա վրայ եւ, կարծես, չէր ուզում զրկել նրան այդ փոքրիկ զուարճութիւնից:

— Շուռ տո՛ւր դէպի աջ, — նկատեց նա, — աշխատիր մօտենալ եզերքին, եթէ ոչ, յորձանքների մէջ կընկնենք:

Յետոյ դառնալով ինձ՝ հարցրեց.

— Դու լողալ իմանո՞ւմ ես:

— Ոչ, — պատասխանեցի ես:

— Երբ մի քանի րոպէից յետոյ այդ նաւակը ջրի տակը կը գնայ, դու բռնիր այստեղից: — Նա սառնասրտութեամբ ցոյց տուեց իր գօտին:

Ես սոսկացի:

Նաւաստին անվրդով կանգնած էր եւ ոտքը դրել էր նաւակի կողքի վրայ, կարծես նրա զօրաւոր ճնշումով աշխատում էր պահպանել նաւակի հաւասարակշռութիւնը, որը այդ միջոցին, մի փայտեայ կոտրած շերեփի նման, ծփում էր զայրացած կոհակների մէջ: Հարաւային տաք քամին, որը, անցնելով Միջագետքի արեւակէզ անապատներից եւ փոքր-ինչ զովանալով